Վ Ե Ր Լ Ո Ւ Ծ Ա Կ Ա Ն Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք

Հայաստանի Հանրապետության բնակավայրերում և ընդհանուր օգտագործման միջպետական նշանակության ավտոմոբիլային ճանապարհներին հանրային շարժական կապի ծածկույթի հասանելիության ապահովման աշխատանքների վերաբերյալ

ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի հեռահաղորդակցության վարչությունը վերլուծել է հանձնաժողովի 2020 թվականի հունվարի 9-ի N1-Ն որոշման համաձայն՝ «Տելեկոմ Արմենիա» ԲԲԸ-ի, «Վիվա Արմենիա» և «Յուքոմ» ՓԲԸ-ների կողմից հրապարակված՝ 2026 թվականի առնվազն հունվարի 1-ի դրությամբ շարժական կապի ծածկույթների հասանելիության վերաբերյալ առկա տեղեկատվությունը:

Շարժական կապի ծածկույթի հասանելիության ցուցանիշները բնակավայրերում (և միջպետական ճանապարհներին ընդհանուր ծածկույթի գնահատման մասով) հաշվարկվել են օպերատորների կողմից իրականացված՝ համակարգչային սիմուլյացիաների, իսկ միջպետական ճանապարհներին 4G+(LTE Advanced) տեխնոլոգիայի հասանելիության մասով՝ վարման սկզբունքով չափումների (drive test) իրականացման արդյունքերի հիման վրա:

Վերլուծության ընթացքում հաշվի է առնվել «Հայաստանի Հանրապետության վարչատարածքային բաժանման մասին» օրենքը, որի համաձայն՝ ՀՀ տարածքում առկա է 1002 բնակավայր (ներառված չէ ՀՀ Գեղարքունիքի մարզի Արծվաշեն բնակավայրը), որոնցից 38-ում ՀՀ վիճակագրական կոմիտեի հրապարակած տվյալների համաձայն՝ բնակչություն առկա չէ, կամ չկա որևէ նշում բնակեցված լինելու մասին, այնուամենայնիվ նշված բնկավայրերում նույնպես հասանելի է հանրային շարժական կապի ծածկույթը, ինչպես նաև ՀՀ կառավարության 2014 թվականի փետրվարի 13-ի N265-Ն որոշումը, որի համաձայն հաստատված է Հայաստանի Հանրապետության ընդհանուր օգտագործման միջպետական ավտոմոբիլային ճանապարհների անվանացանկը:

<u>Հանրապետության բոլոր (100%) բնակավայրերում հասանելի է (առնվազն մեկ օպերատորի հասանելիությամբ) հանրային շարժական կապի 2G, 3G (որտեղ առկա է բնակչություն) և 4G+(LTE Advanced) տեխնոլոգիաների ծածկույթը, իսկ 497 բնակավայրում՝ առնվազն մեկ օպերատորի 5G տեխնոլոգիայի ծածկույթը</u> (առավելապես «Յուքոմ» ՓԲԸ-ի ցանցն է, կիրառվում են Non Stand Alone/Dynamic Spectrum Sharing/Carrier aggregation-ոչ ինքնավար ռեժիմի ցանցի/սպեկտրի դինամիկ բաժանման/կրող հաճախականության ագրեգացիայի լուծումների հիման վրա):

<u>Հանրապետության ընդհանուր օգտագործման միջպետական ավտոմոբիլային ճանապարհների 99.6%-ում հասանելի է առնվազն մեկ օպերատորի հանրային շարժական կապի ծածկույթ՝ 95,9%-ում 4G+(LTE Advanced) տեխնոլոգիայով: Բոլոր 3 օպերատորների շարժական կապի 4G+(LTE Advanced) տեխնոլոգիայի ծածկույթը հասանելի է ընդհանուր օգտագործման միջպետական ավտոմոբիլային ճանապարհների առնվազն 80%-ում:</u>

Ստորև բերված են հանրապետության բնակավայրերում և ընդհանուր օգտագործման միջպետական ավտոմոբիլային ճանապարհներին շարժական կապի ծածկույթների հասանելիության դիագրամները՝ ըստ կիրառվող տեխնոլոգիաների և բնակավայրերում փոխադարձ ներթափանցելիության հասանելիության, ինչպես նաև ըստ յուրաքանչյուր օպերատորի:

ՀՀ բնակավայրերում հանրային շարժական կապի 5G տեխնոլոգիայի ծածկույթ (%)



Հանրապետության **<u>497 բնակավայրում հասանելի է առնվազն մեկ օպերատորի 5G տեխնոլոգիայի ծածկույթը</u>** (առավելապես «Յուքոմ» ՓԲԸ-ի ցանցն է, կիրառվում են Non Stand Alone/Dynamic Spectrum Sharing/Carrier aggregation-ոչ ինքնավար ռեժիմի ցանցի/սպեկտրի դինամիկ բաժանման/կրող հաճախականության ագրեգացիայի լուծումների հիման վրա): 5G տեխնոլոգիայի ծածկույթը հասանելի է գրեթե բոլոր՝ 48 քաղաքային (քաղաքային բնակավայրերի 98%-ում, բացառությամբ Դաստակերտ քաղաքի) և 449 գյուղական (գյուղական բնակավայրերի 47,1%-ում) բնակավայրերում, որը բնակչության ընդգրկվածության առումով կազմում է շուրջ 85%: Ընդ որում, Երևան, Գյումրի և Վանաձոր քաղաքներում հասանելի են բոլոր 3 օպերատորների 5G

տեխնոլոգիայի ծածկույթները, իսկ 12 քաղաքային բնակավայրում՝ 2 օպերատորների («Յուքոմ» և «Վիվա Արմենիա») 5G տեխնոլոգիայի ծածկույթները: Հանրապետությունում 5G տեխնոլոգիայի հասանելիությունը նախորդ տարվա համեմատ ընդլայնվել է 449 բնակավայրով՝ ավելի քան 10 անգամ:

ՀՀ բնակավայրերում հանրային շարժական կապի ծածկույթի փոխադարձ ներթափանցելիություն՝ անկախ կիրառվող տեխնոլոգիայի (%)



Ընդհանուր ծածկույթ առնվազն 2 օպերատոր 3 օպերատոր

Հանրապետության բոլոր բնակավայրերում հասանելի է առնվազն 1 օպերատորի շարժական կապի ծածկույթն՝ անկախ կիրառվող տեխնոլոգիայի: Հանրապետության բնակավայրերում առնվազն 2 օպերատորի փոխադարձ ներթափանցելի շարժական կապի ծածկույթի հասանելիության ցուցանիշը՝ անկախ կիրառվող տեխնոլոգիայի, կազմել է 96,9% (971 բնակավայր)՝ նախորդ տարվա համեմատ ընդլայնվելով 2 բնակավայրով, իսկ 3 օպերատորի փոխադարձ ներթափանցելի շարժական կապի ծածկույթի հասանելիությունը՝ 90,6% (908 բնակավայր), նախորդ տարվա համեմատ ընդլայնվելով 23 բնակավայրով:

4G+/LTE Advanced տեխնոլոգիայի ծածկույթի փոխադարձ ներթափանցելիություն (%)



Ընդհանուր ծածկույթ առնվազն 2 օպերատոր 3 օպերատոր

Հանրապետության բոլոր բնակավայրերում հասանելի է առնվազն 1 օպերատորի 4G+(LTE Advanced) տեխնոլոգիայի ծածկույթը: Բնակավայրերում առնվազն 2 օպերատորի փոխադարձ ներթափանցելի 4G+(LTE Advanced) տեխնոլոգիայի ծածկույթի հասանելիության

ցուցանիշը կազմել է 93,9% (941 բնակավայր)՝ նախորդ տարվա համեմատ ընդլայնվելով 16 բնակավայրով, իսկ 3 օպերատորի փոխադարձ ներթափանցելի 4G+(LTE Advanced) տեխնոլոգիայի ծածկույթի հասանելիությունը՝ 83,6% (838 բնակավայր), նախորդ տարվա համեմատ ընդլայնվելով 590 բնակավայրով՝ շուրջ 3,5 անգամ:

3G տեխնոլոգիայի ծածկույթի փոխադարձ ներթափանցելիություն (%)



Ընդհանուր ծածկույթ առնվազն 2 օպերատոր 3 օպերատոր

Հանրապետության բոլոր բնակեցված բնակավայրերում հասանելի է առնվազն 1 օպերատորի 3G տեխնոլոգիայի ծածկույթը, 968 բնակավայրում (96.6%)՝ առնվազն 2 օպերատորի փոխադարձ ներթափանցելի 3G տեխնոլոգիայի ծածկույթը՝ նախորդ տարվա համեմատ ընդլայնվելով 6 բնակավայրով, իսկ 899 բնակավայրում (89,7%)՝ բոլոր 3 օպերատորների փոխադարձ ներթափանցելի 3G տեխնոլոգիայի ծածկույթը՝ նախորդ տարվա համեմատ ընդլայնվելով 31 բնակավայրով:

2G տեխնոլոգիայի ծածկույթի փոխադարձ ներթափանցելիություն (%)



Ընդհանուր ծածկույթ առնվազն 2 օպերատոր 3 օպերատոր

Հանրապետության բոլոր բնակավայրերում հասանելի է առնվազն 1 օպերատորի 2G տեխնոլոգիայի ծածկույթը, 967 բնակավայրում (96.5%)՝ առնվազն 2 օպերատորի փոխադարձ ներթափանցելի 2G տեխնոլոգիայի ծածկույթը՝ նախորդ տարվա համեմատ ընդլայնվելով 9 բնակավայրով, իսկ 848 բնակավայրում (84,6%)՝ բոլոր 3 օպերատորների փոխադարձ ներթափանցելի 2G տեխնոլոգիայի ծածկույթը՝ նախորդ տարվա համեմատ ընդլայնվելով 28

բնակավայրով:

Այսինքն՝ հանրապետության **բոլոր** 1002 բնակավայրերում հասանելի է առնվազն 1 օպերատորի շարժական կապի 4G+(LTE Advanced) տեխնոլոգիայի ծածկույթը: Առնվազն 2 օպերատորի փոխադարձ ներթափանցելի շարժական կապի ծածկույթը՝ անկախ կիրառվող տեխնոլոգիայի հասանելի է 971 բնակավայրում, որից 941 բնակավայրում՝ 4G+(LTE Advanced) տեխնոլոգիայով, իսկ 3 օպերատորների փոխադարձ ներթափանցելի շարժական կապի ծածկույթը՝ անկախ կիրառվող տեխնոլոգիայի հասանելի է 908 բնակավայրում, որից 838 բնակավայրում 4G+(LTE Advanced) տեխնոլոգիայով, որն իր հերթին բնակչության ընդգրկվածության առումով կազմում է հանրապետության բնակչության շուրջ 98,1%:

Հանրապետության ընդհանուր օգտագործման միջպետական ավտոմոբիլային ճանապարհների 99,3%-ում հասանելի է «Վիվա Արմենիա» ընկերության շարժական կապի ծածկույթը՝ 82,9%-ը 4G+(LTE Advanced) տեխնոլոգիայով, 98,7%-ում՝ «Տելեկոմ Արմենիա» ընկերության շարժական կապի ծածկույթը՝ 90,3%-ը 4G+(LTE Advanced) տեխնոլոգիայով և 99,6%-ում՝ «Յուքոմ» ընկերության շարժական կապի ծածկույթը՝ 95,9%-ը 4G+(LTE Advanced) տեխնոլոգիայով:

Հանրապետության բնակավայրերում շարժական կապի ընդհանուր, այդ թվում՝ 4G+/LTE Advanced տեխնոլոգիայի ամենաընդարձակ ծածկույթը «Վիվա Արմենիա» ընկերության ծածկույթն է, ընկերության շարժական կապի 4G+/LTE Advanced տեխնոլոգիայի ծածկույթը հասանելի է հանրապետության բոլոր 1002 բնակավայրերում (100%):

2025 թվականի ընթացքում էապես՝ 604 բնակավայրով ընդլայնվել է «Տելեկոմ Արմենիա» ընկերության շարժական կապի 4G+/LTE Advanced տեխնոլոգիայի ծածկույթը:

Արդյունքում, «Տելեկոմ Արմենիա» ընկերության շարժական կապի ընդհանուր ծածկույթը հասանելի է 946 բնակավայրում (94,4%), այդ թվում՝ 853 բնակավայրում (85,1%)՝ 4G+/LTE Advanced տեխնոլոգիայով, իսկ «Յուքոմ» ընկերության շարժական կապի ընդհանուր ծածկույթը՝ 933 բնակավայրում (93,1%), այդ թվում՝ 926 բնակավայրում (92,4%)՝ 4G+/LTE Advanced տեխնոլոգիայով:

Հանրապետության բնակավայրերում շարժական կապի 5G տեխնոլոգիայի ամենաընդարձակ ծածկույթը «Յուքոմ» ընկերության ծածկույթն է: Ընկերության շարժական կապի ցանցի արդիականացման և վերազինման արդյունքում՝ հանրապետության քաղաքային գրեթե բոլոր՝ 48 քաղաքային (բացառությամբ Դաստակերտ քաղաքի) և 447 գյուղական բնակավայրերում հասանելի է դարձել ընկերության 5G տեխնոլոգիայի ծածկույթը:

Հանրապետության ընդհանուր օգտագործման միջպետական ավտոմոբիլային ճանապարհներին առավել ընդարձակ շարժական կապի ծածկույթ, այդ թվում՝ 4G+/LTE

Advanced տեխնոլոգիայով, ունի «Յուքոմ» ընկերությունը՝ համապատասխանաբար՝ 99,6% և 95,9%:

4G+/LTE Advanced տեխնոլոգիայի ծածկույթի հասանելիությունը ընդհանուր օգտագործման միջպետական նշանակության ավտոմոբիլային ճանապարհներին՝ ըստ օպերատորների



Ընդհանուր օգտագործման միջպետական նշանակության ավտոմոբիլային ճանապարհներին շարժական կապի ծածկույթի հասանելիությունն անկախ կիրառվող տեխնոլոգիայի՝ ըստ օպերատորների



«Տելեկոմ Արմենիա» ԲԲԸ-ի հանրային շարժական կապի ծածկույթի հասանելիություն

«Տելեկոմ Արմենիա» ԲԲԸ-ի շարժական կապի ծածկույթը հասանելի է բնակավայրերի 94.4%-ում՝ 946 բնակավայր, որոնցում ամբողջությամբ հասանելի է նաև տվյալ օպերատորի 2G տեխնոլոգիայի, ինչպես նաև 3G տեխնոլոգիայի ծածկույթը: Ընդ որում, նախորդ տարվա համեմատ ընկերության 3G տեխնոլոգիայի ծածկույթը ընդլայնվել է 27 բնակավայրով: «Տելեկոմ Արմենիա» ԲԲԸ-ի շարժական կապի 4G+(LTE Advanced) տեխնոլոգիայի ծածկույթը հասանելի է 853 բնակավայրում, կամ բնակավայրերի 85.1%-ում, որը նախորդ տարվա համեմատ ընդլայնվել է 604 բնակավայրով: Ընկերության կողմից շարժական կապի ցանցի արդիականացման և վերազինման արդյունքում՝ Երևան, Վանաձոր և Գյումրի քաղաքներում հասանելի է 5G տեխնոլոգիայի ծածկույթը: 2025 թվականի հունվարի 1-ի դրությամբ «Տելեկոմ Արմենիա» ԲԲԸ-ի շարժական կապի ծածկույթ առկա չէ բնակավայրերի 5.6%-ում (56 բնակավայրում), որը նախորդ տարվա համեմատ նվազել է 27 բնակավայրով: Ընկերության

շարժական կապի ծածկույթը հասանելի է հանրապետության ընդհանուր օգտագործման միջպետական ավտոմոբիլային ճանապարհների 98,7%-ում, իսկ 90,3%-ում՝ 4G+(LTE Advanced) տեխնոլոգիայով:



4G+/LTE Advanced տեխնոլոգիայի ծածկույթ միջպետական ավտոմոբիլային ճանապարհներին

«Վիվա Արմենիա» ՓԲԸ-ի հանրային շարժական կապի ծածկույթի հասանելիություն

«Վիվա Արմենիա» ՓԲԸ-ի շարժական կապի ծածկույթը հասանելի է բոլոր 1002 բնակավայրում (100%-ում): Ընդ որում, հանրապետության բոլոր բնակավայրերում հասանելի են ընկերության շարժական կապի 2G և 4G+(LTE Advanced) տեխնոլոգիաների ծածկույթները, իսկ 991 բնակավայրում, կամ բնակավայրերի 98.9%-ում՝ 3G տեխնոլոգիայի ծածկույթը: Ընկերության կողմից շարժական կապի ցանցի արդիականացման և վերազինման արդյունքում՝ 44 բնակավայրում հասանելի է 5G տեխնոլոգիայի ծածկույթը, որը նախորդ տարվա համեմատ ընդլայնվել է 42 բնակավայրով: Ընկերության շարժական կապի ծածկույթը հասանելի է հանրապետության ընդհանուր օգտագործման միջպետական ավտոմոբիլային ճանապարհների 99,3%-ում, իսկ 82,9%-ում՝ 4G+(LTE Advanced) տեխնոլոգիայով:

4G+/LTE Advanced տեխնոլոգիայի ծածկույթ միջպետական ավտոմոբիլային ճանապարհներին

«Յուքոմ» ՓԲԸ-ի հանրային շարժական կապի ծածկույթի հասանելիություն

«Յուքոմ» ՓԲԸ-ի շարժական կապի ծածկույթը հասանելի է բնակավայրերի 93.1%-ում՝ 933 բնակավայրում: 869 բնակավայրում, կամ բնակավայրերի 86.7%-ում հասանելի է տվյալ օպերատորի շարժական կապի 2G տեխնոլոգիայի ծածկույթը, որը նախորդ տարվա համեմատ ընդլայնվել է 10 բնակավայրով, 929 բնակավայրում, կամ բնակավայրերի 92.7%-ում՝ 3G տեխնոլոգիայի ծածկույթը, որը նախորդ տարվա համեմատ ընդլայնվել է 10 բնակավայրով: Ընկերության 4G+/LTE Advanced տեխնոլոգիայի ծածկույթը հասանելի է բնակավայրերի 92.4%-ում՝ 926 բնակավայրում, որը նախորդ տարվա համեմատ ընդլայնվել է 2 բնակավայրով: 2025 թվականի հունվարի 1-ի դրությամբ «Յուքոմ» ՓԲԸ-ի շարժական կապի ծածկույթ առկա չէ բնակավայրերի 6,9%-ում (69 բնակավայում): «Յուքոմ» ընկերության կողմից շարժական կապի ցանցի արդիականացման և վերազինման արդյունքում՝ հանրապետության քաղաքային 48 քաղաքային և 447 գյուղական բնակավայրերում հասանելի է դարձել 5G տեխնոլոգիայի ծածկույթը, որը նախորդ տարվա համեմատ ընդլայնվել է 448 բնակավայրով: Ընկերության շարժական կապի ծածկույթը հասանելի է հանրապետության ընդհանուր օգտագործման միջպետական ավտոմոբիլային ճանապարհների 99,6%-ում, իսկ 95,9%-ում՝ 4G+(LTE Advanced) տեխնոլոգիայով:



4G+/LTE Advanced տեխնոլոգիայի ծածկույթ միջպետական ավտոմոբիլային ճանապարհներին

Հանրային շարժական կապի ծածկույթի հասանելիությունը ՀՀ մարզերում

Արագածոտնի մարզ

2G տեխնոլոգիայի ծածկույթի փոխադարձ ներթափանցելիություն (%)



3G տեխնոլոգիայի ծածկույթի փոխադարձ ներթափանցելիություն (%)



4G+/LTE Advanced տեխնոլոգիայի ծածկույթի փոխադարձ ներթափանցելիություն (%)



Արագածոտնի մարզում 3 օպերատորի փոխադարձ ներթափանցելի շարժական կապի առավել ընդարձակ ծածկույթը 2G տեխնոլոգիայի ծածկույթն է՝ բնակավայրերի 90,9%-ում առկա է բոլոր 3 օպերատորների 2G տեխնոլոգիայի ծածկույթ: 5 բնակավայրով ընդլայնվել են 3 օպերատորի փոխադարձ ներթափանցելի 3G, իսկ 94 բնակավայրով՝ 4G+(LTE Advanced) տեխնոլոգիայի ծածկույթները:

Մարզի բնակավայրերում առկա են առնվազն 2 օպերատորի 2G, 3G և 4G+(LTE Advanced) տեխնոլոգիաների ընդարձակ ծածկույթներ: 98,3%-ում (նախորդ տարվա համեմատ

ընդլայնվել է 1 բնակավայրով), 99,2%-ում (նախորդ տարվա համեմատ ընդլայնվել է 1 բնակավայրով) և 96,7%-ում (նախորդ տարվա համեմատ ընդլայնվել է 1 բնակավայրով) առկա են առնվազն 2 օպերատորի համապատասխանաբար 2G, 3G և 4G+(LTE Advanced) տեխնոլոգիաների ծածկույթներ:

5G տեխնոլոգիայի ծածկույթը հասանելի է մարզի 40 (մարզի բնակավայրերի 33%-ում)՝ ներառյալ բոլոր 3 քաղաքային բնակավայրերում, որը նախորդ տարվա համեմատ ընդլայնվել է 39 բնակավայրով:

Արարատի մարզ

2G տեխնոլոգիայի ծածկույթի փոխադարձ ներթափանցելիություն (%)



Ընդհանուր ծածկույթ առնվազն 2 օպերատոր 3 օպերատոր

3G տեխնոլոգիայի ծածկույթի փոխադարձ ներթափանցելիություն (%)



Ընդհանուր ծածկույթ առնվազն 2 օպերատոր 3 օպերատոր

4G+/LTE Advanced տեխնոլոգիայի ծածկույթի փոխադարձ ներթափանցելիություն (%)



Ընդհանուր ծածկույթ առնվազն 2 օպերատոր 3 օպերատոր

Արարատի մարզում 3 օպերատորի փոխադարձ ներթափանցելի շարժական կապի առավել ընդարձակ ծածկույթը 3G տեխնոլոգիայի ծածկույթն է՝ բնակավայրերի 99%-ում առկա է բոլոր 3 օպերատորների 3G տեխնոլոգիայի ծածկույթ, որը նախորդ տարվա համեմատ ընդլայնվել է 1 բնակավայրով: 65 բնակավայրով ընդլայնվել է նաև 3 օպերատորի փոխադարձ ներթափանցելի 4G+(LTE Advanced) տեխնոլոգիաների ծածկույթը:

Մարզի բնակավայրերի 99%-ում առկա են առնվազն 2 օպերատորի 2G, 3G և 4G+(LTE Advanced) տեխնոլոգիաների ծածկույթներ:

5G տեխնոլոգիայի ծածկույթը հասանելի է մարզի 59 (մարզի բնակավայրերի 59,6%-ում)՝ ներառյալ բոլոր 4 քաղաքային բնակավայրերում, որը նախորդ տարվա համեմատ ընդլայնվել է 58 բնակավայրով:

Արմավիրի մարզ

2G տեխնոլոգիայի ծածկույթի փոխադարձ ներթափանցելիություն (%)



Ընդհանուր ծածկույթ առնվազն 2 օպերատոր 3 օպերատոր

3G տեխնոլոգիայի ծածկույթի փոխադարձ ներթափանցելիություն (%)



Ընդհանուր ծածկույթ առնվազն 2 օպերատոր 3 օպերատոր

4G+/LTE Advanced տեխնոլոգիայի ծածկույթի փոխադարձ ներթափանցելիություն (%)



Ընդհանուր ծածկույթ առնվազն 2 օպերատոր 3 օպերատոր

Արմավիրի մարզում 3 օպերատորի փոխադարձ ներթափանցելի շարժական կապի առավել ընդարձակ ծածկույթը 3G տեխնոլոգիայի ծածկույթն է՝ բնակավայրերի 97,9%-ում առկա է բոլոր 3 օպերատորների 3G տեխնոլոգիայի ծածկույթ, որը նախորդ տարվա համեմատ ընդլայնվել է 2 բնակավայրով:

Մարզի բոլոր (100%) բնակավայրերում առկա են առնվազն 2 օպերատորի 2G, 3G և 4G+(LTE Advanced) տեխնոլոգիաների ծածկույթներ:

5G տեխնոլոգիայի ծածկույթը հասանելի է մարզի 54 (մարզի բնակավայրերի 55,1%-ում)՝ ներառյալ բոլոր 3 քաղաքային բնակավայրերում, որը նախորդ տարվա համեմատ ընդլայնվել է 54 բնակավայրով:

Գեղարքունիքի մարզ

2G տեխնոլոգիայի ծածկույթի փոխադարձ ներթափանցելիություն (%)



Ընդհանուր ծածկույթ առնվազն 2 օպերատոր 3 օպերատոր

3G տեխնոլոգիայի ծածկույթի փոխադարձ ներթափանցելիություն (%)



Ընդհանուր ծածկույթ առնվազն 2 օպերատոր 3 օպերատոր

4G+/LTE Advanced տեխնոլոգիայի ծածկույթի փոխադարձ ներթափանցելիություն (%)



Ընդհանուր ծածկույթ առնվազն 2 օպերատոր 3 օպերատոր

Գեղարքունիքի մարզում 3 օպերատորի փոխադարձ ներթափանցելի շարժական կապի առավել ընդարձակ ծածկույթը 3G տեխնոլոգիայի ծածկույթն է՝ բնակավայրերի 91,7%-ում առկա է բոլոր 3 օպերատորների 3G տեխնոլոգիայի ծածկույթ, որը նախորդ տարվա համեմատ ընդլայնվել է 1 բնակավայրով: 71 բնակավայրով ընդլայնվել է նաև 3 օպերատորի փոխադարձ ներթափանցելի 4G+(LTE Advanced) տեխնոլոգիաների ծածկույթը:

Մարզի բնակավայրերի 97,9%-ում (նախորդ տարվա համեմատ ընդլայնվել է 1 բնակավայրով), 97,9%-ում և 92,8%-ում (նախորդ տարվա համեմատ ընդլայնվել է 1 բնակավայրով) առկա են առնվազն 2 օպերատորի համապատասխանաբար 2G, 3G և 4G+(LTE Advanced) տեխնոլոգիաների ծածկույթներ:

5G տեխնոլոգիայի ծածկույթը հասանելի է մարզի 29 (մարզի բնակավայրերի 29,9%-ում)՝ ներառյալ բոլոր 5 քաղաքային բնակավայրերում, որը նախորդ տարվա համեմատ ընդլայնվել է 27 բնակավայրով:

Լոռու մարզ

2G տեխնոլոգիայի ծածկույթի փոխադարձ ներթափանցելիություն (%)



3G տեխնոլոգիայի ծածկույթի փոխադարձ ներթափանցելիություն (%)



4G+/LTE Advanced տեխնոլոգիայի ծածկույթի փոխադարձ ներթափանցելիություն (%)



Լոռու մարզում 3 օպերատորի փոխադարձ ներթափանցելի շարժական կապի առավել ընդարձակ ծածկույթը 3G տեխնոլոգիայի ծածկույթն է՝ բնակավայրերի 89,9%-ում առկա է բոլոր 3 օպերատորների 3G տեխնոլոգիայի ծածկույթ, որը նախորդ տարվա համեմատ ընդլայնվել է 7 բնակավայրով: 76 բնակավայրով ընդլայնվել է նաև 3 օպերատորի փոխադարձ ներթափանցելի 4G+(LTE Advanced) տեխնոլոգիաների ծածկույթը:

Մարզի բնակավայրերում առկա են առնվազն 2 օպերատորի 2G, 3G և 4G+(LTE Advanced) տեխնոլոգիաների ընդարձակ ծածկույթներ: 93,8%-ում (նախորդ տարվա համեմատ ընդլայնվել է 2 բնակավայրով), 94,6%-ում (նախորդ տարվա համեմատ ընդլայնվել է 1 բնակավայրով) և 93%-ում (նախորդ տարվա համեմատ ընդլայնվել է 6 բնակավայրով) առկա են առնվազն 2 օպերատորի համապատասխանաբար 2G, 3G և 4G+(LTE Advanced) տեխնոլոգիաների ծածկույթներ:

5G տեխնոլոգիայի ծածկույթը հասանելի է մարզի 79 (մարզի բնակավայրերի 61,2%-ում)՝ ներառյալ բոլոր 8 քաղաքային բնակավայրերում: Վանաձոր քաղաքում հասանելի է 3 օպերատորի, իսկ Ալավերդի, Թումանյան, Սպիտակ և Ստեփանավան քաղաքներում՝ 2 օպերատորի փոխադարձ ներթափանցելի 5G տեխնոլոգիայի ծածկույթը: Մարզում 5G տեխնոլոգիայի ծածկույթը նախորդ տարվա համեմատ ընդլայնվել է 63 բնակավայրով:

Կոտայքի մարզ

2G տեխնոլոգիայի ծածկույթի փոխադարձ ներթափանցելիություն (%)



3G տեխնոլոգիայի ծածկույթի փոխադարձ ներթափանցելիություն (%)



Ընդհանուր ծածկույթ առնվազն 2 օպերատոր 3 օպերատոր

4G+/LTE Advanced տեխնոլոգիայի ծածկույթի փոխադարձ ներթափանցելիություն (%)



Ընդհանուր ծածկույթ առնվազն 2 օպերատոր 3 օպերատոր

Կոտայքի մարզում 3 օպերատորի փոխադարձ ներթափանցելի շարժական կապի առավել ընդարձակ ծածկույթը 3G տեխնոլոգիայի ծածկույթն է՝ բնակավայրերի 94,1%-ում առկա է բոլոր 3 օպերատորների 3G տեխնոլոգիայի ծածկույթը, որը նախորդ տարվա համեմատ ընդլայնվել է 1 բնակավայրով: 28 բնակավայրով ընդլայնվել է նաև 3 օպերատորի փոխադարձ ներթափանցելի 4G+(LTE Advanced) տեխնոլոգիաների ծածկույթը:

Մարզի բնակավայրերի 98,5%-ում առկա է առնվազն 2 օպերատորի 2G, 3G և 4G+(LTE Advanced) (նախորդ տարվա համեմատ ընդլայնվել է 2 բնակավայրով) տեխնոլոգիաների ծածկույթներ:

5G տեխնոլոգիայի ծածկույթը հասանելի է մարզի 49 բնակավայրերում (բնակավայրերի 72%-ում)՝ ներառյալ բոլոր 7 քաղաքային բնակավայրերում, որը նախորդ տարվա համեմատ ընդլայնվել է 42 բնակավայրով: Աբովյան, Բյուրեղավան, Ծաղկաձոր, Հրազդան, Նոր Հաճըն և Չարենցավան քաղաքներում հասանելի է 2 օպերատորի փոխադարձ ներթափանցելի 5G տեխնոլոգիայի ծածկույթը:

Շիրակի մարզ

2G տեխնոլոգիայի ծածկույթի փոխադարձ ներթափանցելիություն (%)



Ընդհանուր ծածկույթ առնվազն 2 օպերատոր 3 օպերատոր

3G տեխնոլոգիայի ծածկույթի փոխադարձ ներթափանցելիություն (%)



Ընդհանուր ծածկույթ առնվազն 2 օպերատոր 3 օպերատոր

4G+/LTE Advanced տեխնոլոգիայի ծածկույթի փոխադարձ ներթափանցելիություն (%)



Ընդհանուր ծածկույթ առնվազն 2 օպերատոր 3 օպերատոր

Շիրակի մարզում 3 օպերատորի փոխադարձ ներթափանցելի շարժական կապի առավել ընդարձակ ծածկույթը 3G տեխնոլոգիայի ծածկույթն է՝ բնակավայրերի 93,1%-ում առկա է բոլոր 3 օպերատորների 3G տեխնոլոգիայի ծածկույթը, որը նախորդ տարվա համեմատ ընդլայնվել է 3 բնակավայրով:

Մարզի բնակավայրերի 97,7%-ում առկա են առնվազն 2 օպերատորի 2G և 3G (նախորդ տարվա համեմատ ընդլայնվել են համապատասխանաբար 1 և 2 բնակավայրով), իսկ 95,4%-ում 4G+(LTE Advanced) տեխնոլոգիաների ծածկույթներ:

5G տեխնոլոգիայի ծածկույթը հասանելի է մարզի 87 (բնակավայրերի 66,9%-ում)՝ ներառյալ

բոլոր 3 քաղաքային բնակավայրերը: Գյումրի քաղաքում հասանելի է 3 օպերատորի, իսկ Արթիկ և Մարալիկ քաղաքներում 2 օպերատորի փոխադարձ ներթափանցելի 5G տեխնոլոգիայի ծածկույթը: Մարզում 5G տեխնոլոգիայի ծածկույթը նախորդ տարվա համեմատ ընդլայնվել է 83 բնակավայրով:

Սյունիքի մարզ

2G տեխնոլոգիայի ծածկույթի փոխադարձ ներթափանցելիություն (%)



Ընդհանուր ծածկույթ առնվազն 2 օպերատոր 3 օպերատոր

3G տեխնոլոգիայի ծածկույթի փոխադարձ ներթափանցելիություն (%)



Ընդհանուր ծածկույթ առնվազն 2 օպերատոր 3 օպերատոր

4G+/LTE Advanced տեխնոլոգիայի ծածկույթի փոխադարձ ներթափանցելիություն (%)



Ընդհանուր ծածկույթ առնվազն 2 օպերատոր 3 օպերատոր

Սյունիքի մարզում 3 օպերատորի փոխադարձ ներթափանցելի շարժական կապի առավել ընդարձակ ծածկույթը 3G տեխնոլոգիայի ծածկույթն է՝ բնակավայրերի 77%-ում առկա է բոլոր 3 օպերատորների 3G տեխնոլոգիայի ծածկույթ, որը նախորդ տարվա համեմատ ընդլայնվել է 7 բնակավայրով: 48 բնակավայրով ընդլայնվել է նաև 3 օպերատորի փոխադարձ

ներթափանցելի 4G+(LTE Advanced) տեխնոլոգիաների ծածկույթը:

Մարզի բնակավայրերի 92,1%-ում առկա են առնվազն 2 օպերատորի 2G և 3G, իսկ 84,9%-ում (նախորդ տարվա համեմատ ընդլայնվել է 4 բնակավայրով) 4G+(LTE Advanced) տեխնոլոգիաների ծածկույթներ:

5G տեխնոլոգիայի ծածկույթը հասանելի է մարզի 34 (մարզի բնակավայրերի 24,5%-ում)՝ ներառյալ 6 քաղաքային բնակավայրերում (Ագարակ, Գորիս, Կապան, Մեղրի, Սիսիան, Քաջարան), որը նախորդ տարվա համեմատ ընդլայնվել է 31 բնակավայրով:

<u>Վայոց ձորի մարզ</u>

2G տեխնոլոգիայի ծածկույթի փոխադարձ ներթափանցելիություն (%)



Ընդհանուր ծածկույթ առնվազն 2 օպերատոր 3 օպերատոր

3G տեխնոլոգիայի ծածկույթի փոխադարձ ներթափանցելիություն (%)



Ընդհանուր ծածկույթ առնվազն 2 օպերատոր 3 օպերատոր

4G+/LTE Advanced տեխնոլոգիայի ծածկույթի փոխադարձ ներթափանցելիություն (%)



Ընդհանուր ծածկույթ առնվազն 2 օպերատոր 3 օպերատոր

Վայոց ձորի մարզում 3 օպերատորի փոխադարձ ներթափանցելի շարժական կապի առավել ընդարձակ ծածկույթը 3G տեխնոլոգիայի ծածկույթն է՝ բնակավայրերի 74,5%-ում առկա է բոլոր 3 օպերատորների 3G տեխնոլոգիայի ծածկույթ, որը նախորդ տարվա համեմատ

ընդլայնվել է 4 բնակավայրով:

Մարզում առնվազն 2 օպերատորի փոխադարձ ներթափանցելի շարժական կապի առավել ընդարձակ ծածկույթը 2G տեխնոլոգիայի ծածկույթն է՝ բնակավայրերի 87,3%-ում առկա է առնվազն 2 օպերատորի 2G տեխնոլոգիայի ծածկույթ, որը նախորդ տարվա համեմատ ընդլայնվել է 2 բնակավայրով:

5G տեխնոլոգիայի ցանցը հասանելի է մարզի 11 (մարզի բնակավայրերի 20%-ում)՝ ներառյալ բոլոր 3 քաղաքային բնակավայրերում, որը նախորդ տարվա համեմատ ընդլայնվել է 9 բնակավայրով:

<u>Տավուշի մարզ</u>

2G տեխնոլոգիայի ծածկույթի փոխադարձ ներթափանցելիություն (%)



Ընդհանուր ծածկույթ առնվազն 2 օպերատոր 3 օպերատոր

3G տեխնոլոգիայի ծածկույթի փոխադարձ ներթափանցելիություն (%)



Ընդհանուր ծածկույթ առնվազն 2 օպերատոր 3 օպերատոր

4G+/LTE Advanced տեխնոլոգիայի ծածկույթի փոխադարձ ներթափանցելիություն (%)



Ընդհանուր ծածկույթ առնվազն 2 օպերատոր 3 օպերատոր

Տավուշի մարզում 3 օպերատորի փոխադարձ ներթափանցելի շարժական կապի առավել ընդարձակ ծածկույթը 3G և 4G+(LTE Advanced) տեխնոլոգիաների ծածկույթն է՝ բնակավայրերի 93,8%-ում առկա է բոլոր 3 օպերատորների 3G և 4G+(LTE Advanced) (նախորդ տարվա համեմատ ընդլայնվել է 11 բնակավայրով) տեխնոլոգիաների ծածկույթ:
Մարզի բոլոր (100%) բնակավայրերում հասանելի են առնվազն 2 օպերատորի 2G և 3G, իսկ 98,5%-ում՝ 4G+(LTE Advanced) տեխնոլոգիաների ծածկույթներ, որը նախորդ տարվա համեմատ ընդլայնվել է 2 բնակավայրով:
5G տեխնոլոգիայի ծածկույթը հասանելի է մարզի 54 (մարզի բնակավայրերի 83,1%-ում)՝ ներառյալ բոլոր 5 քաղաքային բնակավայրերում, որը նախորդ տարվա համեմատ ընդլայնվել է 43 բնակավայրով:

Այսպիսով, **Հանրապետության բոլոր (100%) բնակավայրերում հասանելի է (առնվազն մեկ օպերատորի հասանելիությամբ) հանրային շարժական կապի 2G, 3G (որտեղ առկա է բնակչություն) և 4G+(LTE Advanced) տեխնոլոգիաների ծածկույթը: 497 բնակավայրում (որը բնակչության ընդգրկվածության առումով կազմում է 85%)՝ ներառյալ գրեթե բոլոր՝ 48 քաղաքային (քաղաքային բնակավայրերի 98%-ում, բացառությամբ Դաստակերտ քաղաքի) բնակավայրրում հասանելի է առնվազն մեկ օպերատորի 5G տեխնոլոգիայի ծածկույթը,** իսկ հանրապետության մարզերում.

- շարժական կապի 5G տեխնոլոգիայի առավել ընդարձակ ծածկույթը Տավուշի մարզում է (մարզի բնակավայրերի 83,1%-ում),
- 3 օպերատորի փոխադարձ ներթափանցելի շարժական կապի 4G+(LTE Advanced) տեխնոլոգիայի առավել ընդարձակ ծածկույթը Արարատի մարզում է, մարզի բնակավայրերի 98%-ում հասանելի է բոլոր 3 օպերատորների 4G+(LTE Advanced) տեխնոլոգիայի ծածկույթը,
- առնվազն 2 օպերատորի փոխադարձ ներթափանցելի շարժական կապի 4G+(LTE Advanced) տեխնոլոգիայի էապես ընդարձակ ծածկույթներ (90%-ից բարձր հասանելիությամբ) առկա են Արագածոտնի, Արարատի, Արմավիրի, Գեղարքունիքի, Լոռու, Կոտայքի, Շիրակի և Տավուշի մարզերում, ընդ որում Արմավիրի մարզի բոլոր և Արարատի մարզի 99% բնակավայրերում առկա է առնվազն 2 օպերատորի փոխադարձ ներթափանցելի շարժական կապի 4G+(LTE Advanced) տեխնոլոգիայի ծածկույթ,
- 3 օպերատորի փոխադարձ ներթափանցելի շարժական կապի 3G տեխնոլոգիայի առավել ընդարձակ ծածկույթը Արարատի մարզում է, մարզի բնակավայրերի 99%-ում հասանելի է բոլոր 3 օպերատորների 3G տեխնոլոգիայի ծածկույթը,

- առնվազն 2 օպերատորի փոխադարձ ներթափանցելի շարժական կապի 3G տեխնոլոգիայի էապես ընդարձակ ծածկույթներ (90%-ից բարձր հասանելիությամբ) առկա են հանրապետության բոլոր մարզերում, բացառությամբ Վայոց ձորի մարզի, որտեղ տվյալ ցուցանիշը կազմում է 85,4%: Ընդ որում, Արմավիրի և Տավուշի մարզերի բոլոր, Արագածոտնի մարզի 99,2% և Արարատի մարզի 99% բնակավայրերում առկա է առնվազն 2 օպերատորի փոխադարձ ներթափանցելի շարժական կապի 3G տեխնոլոգիայի ծածկույթ,
- 3 օպերատորի փոխադարձ ներթափանցելի շարժական կապի 2G տեխնոլոգիայի առավել ընդարձակ ծածկույթը Արարատի և Արմավիրի մարզերում է, մարզերի բնակավայրերի 95,9%-ում հասանելի է բոլոր 3 օպերատորների 2G տեխնոլոգիայի ծածկույթը,
- առնվազն 2 օպերատորի փոխադարձ ներթափանցելի շարժական կապի 2G տեխնոլոգիայի էապես ընդարձակ ծածկույթներ (90%-ից բարձր հասանելիությամբ) առկա են հանրապետության բոլոր մարզերում, բացառությամբ Վայոց ձորի մարզի, որտեղ տվյալ ցուցանիշը կազմում է 87,3%: Ընդ որում, Արմավիրի և Տավուշի մարզերի բոլոր և Արարատի մարզի 99% բնակավայրերում առկա է առնվազն 2 օպերատորի փոխադարձ ներթափանցելի շարժական կապի 2G տեխնոլոգիայի ծածկույթ:

<u>Հանրային շարժական կապի ծածկույթի հասանելիությունը ՀՀ ընդհանուր օգտագործման միջպետական նշանակության ավտոմոբիլային ճանապարհներին</u>

Մ1
Երևան – Գյումրի - ՀՀ սահման (Բավրա)

<u>4G+/LTE Advanced տեխնոլոգիայի ծածկույթ</u>



Ընդհանուր ծածկույթ



Մ2
Երևան - Երասխ – Նորավան - Տաթև - Կապան – Մեղրի - ՀՀ սահման

4G+/LTE Advanced տեխնոլոգիայի ծածկույթ



Ընդհանուր ծածկույթ

Մ3
ՀՀ սահման (Մարգարա) – Վանաձոր – Տաշիր - ՀՀ սահման

4G+/LTE Advanced տեխնոլոգիայի ծածկույթ

Ընդհանուր ծածկույթ



Մ4
Երևան - Սևան - Իջևան - ՀՀ սահման

4G+/LTE Advanced տեխնոլոգիայի ծածկույթ

Ընդհանուր ծածկույթ



Մ5
Երևան – Արմավիր - ՀՀ սահման

4G+/LTE Advanced տեխնոլոգիայի ծածկույթ



Ընդհանուր ծածկույթ

Մ6
Վանաձոր (Մ-3 հատման կետ) - Ալավերդի-ՀՀ սահման (Բագրատաշեն)

4G+/LTE Advanced տեխնոլոգիայի ծածկույթ



Ընդհանուր ծածկույթ



Մ7
/Մ-3/-Սպիտակ-Գյումրի-ՀՀ սահման

4G+/LTE Advanced տեխնոլոգիայի ծածկույթ



Ընդհանուր ծածկույթ



Մ8
Վանաձոր(Մ-6 հատման կետ)-Դիլիջան

4G+/LTE Advanced տեխնոլոգիայի ծածկույթ



Ընդհանուր ծածկույթ



Մ9
/Մ-2/ (Նորավանի խաչմերուկ) - Գորիս-Տեղ-Կոռնիձոր - ՀՀ սահման

4G+/LTE Advanced տեխնոլոգիայի ծածկույթ



Ընդհանուր ծածկույթ



Մ10
Սևան-Մարտունի-Վարդենիս- ՀՀ սահման

4G+/LTE Advanced տեխնոլոգիայի ծածկույթ



Ընդհանուր ծածկույթ



Այսպիսով, **Հանրապետության ընդհանուր օգտագործման միջպետական ավտոմոբիլային ճանապարհների 99.6%-ում հասանելի է առնվազն մեկ օպերատորի հանրային շարժական կապի ծածկույթ՝ 95,9%-ում 4G+(LTE Advanced) տեխնոլոգիայով, ընդ որում՝**

- 3 օպերատորի փոխադարձ ներթափանցելի շարժական կապի 4G+(LTE Advanced) տեխնոլոգիայի առավել ընդարձակ ծածկույթը Մ5 (Երևան – Արմավիր - ՀՀ սահման) միջպետական ճանապարհին է, 88,4%-ում հասանելի է «Տելեկոմ Արմենիա», 96,3%-ում՝ «Վիվա Արմենիա» և 99,54%-ում՝ «Յուքոմ» ընկերության 4G+(LTE Advanced) տեխնոլոգիայի ծածկույթները: